ԱՐՑԱԽ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Ասում են, որ մարդը ապրում է ոչ միայն հացիվ: Այս ճշմարտությունը ըստ երևույթին լավ է յուրացրել Ադրբեջանական ԽՍՀ կապի մինիստրությունը, որոշելով իր լուման մուծել Լեռնային Ղարաբաղի վրա ուժային ճնշում գործադրելու մեջ: Ահա արդեն հինգ ամսից ավելի է, ինչ ինքնավար մարզը ժամանակին չի ստանում կենտրոնական թերթերն ու հանդեսները: Իսկ այս տարվա նոյեմբերի 10-ից առհասարակ դադարեցվեց այնպիսի թերթերի առաքումը, ինչպիսիք են «Արգումենտի ի ֆակտի», «Սոբեսեդնիկ», «Վիտերատուրնայա գազետա», «Սովետսկայա կուլտուրա», «Սովետսկայա Ռոսիա», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերը, «Օգոնյոկ», «Կրոկոդիլ» հանդեսները, մյուս հանրահայտ տպագիր հրատարակությունները: Հասկանալի է, որ նման այլանդակությունը հարուցում է բաժանորդների արդարացի դժգոհությունը, որոնք զրկվել են երկրում և արտասահմանում տեղի ունեցող իրադարձություններին հետևելու հնարավորությունից: Ընդամին մեծ վնասներ է կրում «Սոյուզպեչատի» տեղական գործակալությունը:

— Դեռ հոկտեմբերին մենք կատարվող ապօրինությունների մասին տեղյակ պահեցինք ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ կապի մինիստրներին,— Արմենպրեսի թղթակցին ասաց «Սոյուզպեչատի» Ստեփանակերտի քաղաքային գործակալության պետ Շահեն Աղաջանյանը:— Սակայն մեր հեռագրերը այդպես էլ մնացին առանց կոնկրետ պատասխանի:

Արժե՞ արդյոք դրանից հետո նեղանալ մեր բաժանորդներից, որոնցից շատերը պահանջում են վերադարձնել իրենց փողերը: Կապի համակարգում աշխատելու 23 տարվա ընթացքում առաջին անգամ եմ բախվում մամուլի շրջափակման փաստի հետ: Եվ սա տեղի է ունենում հրապարակայնության և մեր հասարակության դեմոկրատացման դարաշրջանում: Սակայն ամենից ավելի զարմացնում է կենտրոնական իշխանությունների դիրքորոշումը, որոնք նախանձելի անտարբերությամբ են վերաբերվում Ադրբեջանական հանրապետության այդօրինակ աներևակայելի գործողություններին: Ես Հայրենական պատերազմի հաշմանդամ եմ, աշխատանքի վետերան: Այդպես էլ ուզում եմ հարցնել Մոսկվային (չէ որ իրոք նրա խոսքը հասնում է միայն մինչև Ադրբեջան). մի՞թե ես ապրել և մեր հայրենիքի մայրաքաղաքը պաշտպանել եմ նրա համար, որ այսօր դառնամ իմ ժողովրդի հանդեպ այդքան անարդարացի վերաբերմունքի ականատեսը: Վստահ եմ, որ այս հարցն էլ կմնա անպատասխան...

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ